

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ
«ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2024-2029

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Չարգացման ծրագրի բովանդակությունը

1. Հաստատության գործունեությունը	2
2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր	4
2.1 Դպրոցի շենքային պայմանները	5
2.2 Դպրոցի նյութատեխնիկական բազան	7
2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները	8
2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	11
2.5 Հաստատության ուսումնական միջավայրը	11
2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ	16
2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը	17
2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	18
Ուսումնական նպատակով կատարված ծախսերը	19
2.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները	21
3. Նպատակների և խնդիրների սահմանումը:	23
Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը, արդյունքների գնահատման չափանիշները, պատասխանատուները, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը:	23
1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	23
2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ	26
3. Մանկավարժական համակազմ	28
4. Աշակերտական համակազմը	32
5. Ծնողական համակազմ	34
6. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	36
7. Ուսումնական միջավայր	38
8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	41
9. Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	44
Եզրափակում	50

1. Ուսումնական հաստատության գործունեությունը

Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր

երեխային հնարավոր լավագույն կրթություն տալը:

ԴԵՍՄՈՆԴ ԹՈՒԹՈՒ

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

<<<< Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իր գործառույթներն իրականացնելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Պետության վերջին տարիների արմատական բարեփոխումները հանրակրթության ոլորտում բովանդակային մասով, դպրոցներին տրվեց ինքնավարություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը ընդլայնվեց, ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգը ենթարկվեց փոփոխության, ինչպես նաև կառավարման համակարգի ձևափոխություն եղավ:

Այս ամենը սահմանում է զարգացման ծրագրի բովանդակությունը:

Դպրոցը պետք է ունենա զարգացման առնվազն հինգ տարվա տեսլականը և գտնվի անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

Զագացման ծրագրի կազմվել է՝ հաշվի առնելով պետության պատվերը դպրոցին, այն է՝ կրթել այնպիսի քաղաքացի, ով լինի կարողունակ՝ զինված գիտելիքներով, հմտություններով, ունենա հստակ արժեքներ և դիրքորոշումներ, դրանով իսկ նպաստի երկրի զարգացմանը, գիտակցի երկրի շահերի առաջնահերթությունը, ազգային ինքնության, մշակույթի պահպանման և զարգացման խնդիրները, լինի դաստիարակված մարդասիրական ոգով, բազմակողմանի զարգացած:

Հատուկ նպատակ պետք է դառնա աշակերտներին իրենց երկրի զարգացման նկատմամբ պատասխանատու դարձնելը: Զարգացման ծրագիրը կազմվել է նաև բազմակարծիք, մասնակցային եղանակով. հիմքում դպրոցի խորհրդակցական մարմինների վեր հանած կրթական կարիքներն են:

Դպրոցի գործունեությունը ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում:

- **կառավարում.** ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը,
- **ուսումնադաստիարակչական աշխատանքներ.** համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են մանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ,
- **վարչատնտեսական գործունեություն.** ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ դպրոցի հնարավորությունների գնահատման հիման վրա:

Միտայելով կայի միջակարգ դպրոց

1. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար, ուսումնասիրելով դպրոցի մասին եղած ինֆորմացիան, բացահայտել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու խոչընդոտները, ռիսկերը.

2.1 Դպրոցի շենքային պայմանները

Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն

Դպրոցի հիմնադիրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:

Դպրոցի շենքը տիպային է: Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի – միջնակարգ

Դպրոցի աշխատանքային շաբաթը – 5 օրյա

Դպրոցի աշխատանքային ժամակարգը – միահերթ

Հարկայնությունը – 2 հարկանի

Զեռուցման եղանակը – ըստ դասարանների(գազի վառարաններով)

Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, գրադարան, ճաշարան, <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա:

Դպրոցն ունի երկու մասնաշենք՝ 1600մ²: Դպրոցը կառուցվել է 1975 թվականին:

Դպրոցն ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք հերթով լուծվում են: 2022 թվականին Լոռու մարզպետարանի աջակցությամբ միջանցքներում կատարվել է կոսմետիկ վերանորոգում, վերանորոգվել են սանհանգույցները:

2022թ ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ վերանորոգվել է ճաշարանը, ամբողջությամբ վերազինվել է նոր սարքավորումներով: Պահպանվում են սանիտարահիգիենի և հակակամաճարագային պայմանները: Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին՝ շենքում առկա են դեպի ներս բացվող երեք պահուստային և երկու հիմնական ելքեր: Հաստատության նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները: Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում:

Դպրոցը բավարարում է հետևյալ կրթական կարիքները

Դպրոցը նախատեսված է 205 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները՝ ըստ լիցենզիայի

- ❖ տարրական հանրակրթական՝ 66 տեղ
- ❖ հիմնական հանրակրթական՝ 90 տեղ
- ❖ միջնակարգ հանրակրթական՝ 49 տեղ

Շենքային պայմանները	Քանակը	Ընդհանուր մակերեսը քառ.մ	Փաստացի վիճակը
Երկհարկանի 2 մասնաշենք	2	1600.0	բավ
Դասասենյակ	10	415	Բավ
Գրադարան	1	36	բավ
Համակարգչային սենյակ	1	54	բավ
Ուսուցչանոց	1	56	բավ
Տնօրենի կաբինետ	1	56	բավ
<<Արմաթ>>ինժեներական լաբորատորիա	1	56	բավ
Խոհանոց	1	34	բավ
Սննդի պահեստ	1		բավ
Սանհանգույցներ	8		
Ռազմագիտության կաբինետ	1	36	բավ
Գույքի պահեստ	1		բավ

<ul style="list-style-type: none"> • Դպրոցը տիպային է 2932.30 քառ.մ տարածքով, գտնվում է գյուղի կենտրոնում, կազմված է 2 մասնաշենքից, երկհարկանի է • Դպրոցն ունի սպորտհրապարակ • Վարչական սենյակը, ուսուցչանոցը, դասասենյակները կահավորված են, • Դպրոցն ունի ամենօրյա հոսող ջուր, առկա են մշտական ջրով ապահովված թվով 4 վերանորոգված սանհանգույց: • Դպրոցը գազաֆիկացված է, ջեռուցումը՝ ըստ դասարանների • Ունի <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա • Դպրոցն ունի 1 հիմնական և 1 պահուստային ելքեր • Վերանորոգված և կահավորված 	<ol style="list-style-type: none"> 1. Սպորտդահլիճի և հանդերձարանների բացակայություն 2. Դպրոցի 10 դասասենյակները մեծ են լուսավոր, կարիք ունեն վերանորոգման 3. Կարիք ունի ԿԱՊԿ ունեցող երեխաների համար հարմարեցված սենյակի 4. Բակը բարեկարգելու կարիք կա 5. Չունենք ապաստարան 6. Առանձին դասասենյակներ ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք 7. Միջանցքները վերանորոգման կարիք ունեն
--	---

<p>ճաշարան, սննդի պահեստ</p> <ul style="list-style-type: none"> Մուտքի մոտ ունի ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքների համար նախատեսված և թեքահարթակ: 	
--	--

2.2 Դպրոցի նյութատեխնիկական բազան

Դպրոցի գույք, սարքավորումներ

Գույք, սարքավորումներ	Քանակը	Վիճակը
Աշակերտական սեղան	80	բավ
Աշակերտական սեղան	80	բավ
Թենիսի սեղան	1	բավ
Գրասեղան	20	բավ
Սկաներ+տպիչ	1	բավ
Գրատախտակ	14	բավ
Ուսուցչական սեղան	10	բավ
Ուսուցչական աթոռ	20	բավ
Ճաշարանի սեղան հարմարեցված	30	բավ
Պահարան	11	բավ
Ուսումնական համակարգիչ	2	բավ
Աշխատանքային համակարգիչ	3	բավ
Համակարգչային սեղան	2	բավ
Պրոյեկտոր	1	բավ
Մառնարան	1	լավ
Գազօջախ	1	լավ
Ջրատաքացուցիչ	1	լավ
Տպիչ սարքեր	1	բավ

<p>Դպրոցն ունի համակարգիչներ, համացանց, «Արմաթ» հինժեներական</p>	<p>Դպրոցը կարիք ունի 1. ԲՏՃՄ առարկաների և լաբորատորիաների և</p>
--	---

լաբորատորիա՝ համապատասխան գույքով, գրադարան:	համապատասխան նյութերի 2. ժամանակակից համակարգիչների և Սմարթ դասասենյակի 3. Մարզագույքի 4. Գրադարանի վերանորոգման, գրքերի ֆոնդի հարստացման

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Խորհրդակցական մարմիններ

Ըստ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության» ՊՈԱԿ –ի օրինակելի կանոնադրության՝

Դպրոցում ձևավորված են և արդյունավետ գործում են դպրոցի կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, ծնողական և աշակերտական խորհուրդները, առարկայական մեթոդական միավորումները: Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց աշխատանքային ծրագիրը, կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը:

Դպրոցի **կառավարման խորհուրդը** միացյալ խորհուրդ է, աշխատանքներ է կազմակերպում իր աշխատակարգի համաձայն՝ պարբերաբար քննարկումներ իրականացնելով դպրոցի ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև կանոնադրությամբ իրեն վերապահված այլ գործառույթների վերաբերյալ(ներքին և արտաքին գնահատման արդյունքներ և այլն):

Կառավարման խորհուրդի և տնօրենի համագործակցությունը պետք է առավել սերտ լինի, քանի որ խորհրդի ճիշտ և հետևողական աշխատանքի շնորհիվ է, ու կապահովվի ՈւԴ գործընթացի ճիշտ, նպատակային և արդյունավետ իրագործումը:

Ծնողական խորհուրդը կատարում է իր պարտականությունները՝ կանոնադրությամբ իրեն վերագրված լիազորությունների շրջանակներում: Ծնողխորհուրդը պարբերաբար ծանոթանում է ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքին, սովորողների կիսամյակային և տարեկան առաջադիմությանը, կազմակերպում է տարբեր միջոցառումներ, կարևորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը դպրոցում: Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների առավել ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցելու միջոցով:

Աշակերտական խորհուրդն իր մասնախմբերի միջոցով ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դպրոցում կազմակերպվող

միջոցառումներին, նաև օգնում է տնօրենությանը դպրոցի շրջակայքի բարեկարգման, կանաչապատման աշխատանքներում, շաբաթօրյակների անցկացման ժամանակ:

Դպրոցի **մանկավարժական կոլեկտիվը** նվիրված մանկավարժների խումբ է, որի նպատակը սովորողին ճիշտ դաստիարակություն և օգտակար գիտելիք տալն է:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար խորհր ցություններ են հրավիրվում՝ **մեթոդմիավորումների** անդամների մասնակցությամբ: Նիստերի ժամանակ քննարկվում են մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը, մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող և բազմաթիվ այլ հարցեր:

Կրթական գործընթացի ուսումնամեթո ան ապահովումը դպրոցում դրված է ամուր հիմքերի վրա: Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ճիշտ ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացի, դասավանդման ընթացիկ վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակար ի ուսումնասիրությունը, մեթո ան աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջների և պետական ծրագրերի կատարումը:

Դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները իրականացնում են աշխատանքներ հետևյալ խմբերի հետ՝

- *Ծնողական խնամքից զրկված աշակերտների*
- *միայնակ մոր/հոր խնամքի տակ գտնվող աշակերտների*
- *հաշմանդամություն ունեցող աշակերտների*
- *Սոցիալական աջակցություններից օգտվող աշակերտների*
- *նյութապես անապահով աշակերտների*
- *միակողմանի ծնողազուրկ աշակերտների*

Այս աշխատանքներում դպրոցը կհամագործակցի նաև համայնքի հետ: Կզարգանան աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-համայնք-դպրոց հարաբերությունները: Կկազմակերպվեն հանդիպումներ համայնքի ղեկավարի, ավագանու, հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Այդ

համագործակցությունը կբխի աշակերտի շահերից: Սովորողն ու մանկավարժը կներառվեն հասարակության կյանքում՝ դրանով իսկ բարձրացնելով դպրոցի հեղինակությունը:

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախմբի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչ, աշակերտ, ծնող) ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ ազգային մակար ում:

<p>Կառավարման (միացյալ) Գործում է իր լիազորությունների հրականացնելով կանոնադրությամբ վերապահված գործառույթները :</p> <p>Մանկավարժական խորհուրդ Կազմում դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողներն են , ծնողխորհրդի նախագահը: Այն ձևավորված է 18 անդամից: Փորձառու և որակյալ մասնագետներ կան: Մեծ մասը զբաղվում են ինքնակրթությամբ, պարբերաբար մասնակցում վերապատրաստումների և խորհր ցությունների:</p> <p>Ծնողական խորհուրդ Կազմում դպրոցի բոլոր դասարանների ծնողական խորհուրդների նախագահներն են: Տեղյակ են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներից, ակտիվ են տարաբնույթ միջոցառումներ և էքսկուրսիաներ կազմակերպելիս:</p> <p>Աշակերտական խորհուրդ Կանոնադրությամբ գործող այս խորհուրդը հիմնականում իրականացնում է իր գործառույթները, գիտակցում և</p>	<p>Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ:</p> <p>Ուսուցիչները պասիվություն են ցուցաբերում մրցույթների նկատմամբ, չեն մասնակցում կամավոր ատեստավորմանն ու տարակարգի բարձրացմանը:</p> <p>Չկան սովորողների հետաքրքրություններով պայմանավորված, ձևավորված ակումբներ, խմբակներ:</p> <p>Պասիվ են առարկայական մրցույթներ, միջոցառումներ կազմակերպելու գործում:</p>
--	--

<p>գնահատում է ինքնակառավարման կարևորությունը:</p> <p>Մեթոդիավորումներ</p> <p>Դպրոցում գործում է առարկայական 3 մեթոդիավորում՝</p> <ul style="list-style-type: none"> • Հումանիտար • Բնագիտական • Դասվարներ 	
--	--

2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

<p>Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, Լոռու մարզպետարանի, Տաշիրի համայնքապետարանի, ԿԳՄՄՆ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների, մշակութային օջախների, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:</p> <p>Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի, խորհրդակցական մարմինների անդամների, դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ. կազմակերպվում են առանձին հանդիպում- քննարկումներ, դասղեկական ժամեր, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում հալածանքի, օտարման և բռնության/բուլիինգի/ դրսևորումների բացառմանը:</p>	
---	--

<p>✓ Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, Լոռու մարզպետարանի, Տաշիրի համայնքապետարանի, ԿԳՄՄՆ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների, մշակութային օջախների, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:</p>	<p>✓ Բավարար մակարդակի վրա չէ համայնքի և մարզի այլ հաստատությունների հետ համագործակցությունը</p>
---	--

2.5 Հաստատության ուսումնական միջավայրը

Հաստիքների ձևավորման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 07.12.2022թ. [N79-Ն հրամանը](#)

Հաստիք	Պաշտոն
Ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ	Տնօրեն
Ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ	Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ
Ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ	Տնօրենի տեղակալ
Ընդհանուր ղեկավարման համար նախատեսվող հաստիքներ	Տնօրենի տեղակալ ֆինանսատնտեսական գծով
Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքներ	Գլխավոր հաշվապահ
Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքներ	Գնումների համակարգող
Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության համար նախատեսվող հաստիքներ	Հաշվապահ
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Գրադարանավար
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Հոգեբան
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչ (զինդեկ)
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Ուսուցչի օգնական
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Մովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
Ուսուցիչ չհամարվող մանկավարժական աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ
Կադրային գործի իրականացման, գործավարության	Գործավար (Անձնակազմի

և փաստաթղթաշրջանառության աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	կառավարման մասնագետ)
Շենքերի և սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ
Շենքերի (շինությունների) և հարակից տարածքների պահպանման, խնամքի և կենցաղային սպասարկման աշխատանքների համար նախատեսվող հաստիք	Այգեպան
Շենքերի (շինությունների) և հարակից տարածքների պահպանման, խնամքի և կենցաղային սպասարկման աշխատանքների համար նախատեսվող հաստիք	Հավաքարար
Շենքերի (շինությունների) և հարակից տարածքների պահպանման, խնամքի և կենցաղային սպասարկման աշխատանքների համար նախատեսվող հաստիք	Պահակ
Մասնագիտացված և հատուկ դպրոցներում սննդի տրամադրման աշխատանքների համար նախատեսվող հաստիքներ	Խոհարար

Մարդկային ռեսուրսներ

Հ/Հ	Վարչական և ուսումնասօժան անձնակազմ	Հաստիքների ընդհանուր քանակ	Հաստիքը զբաղեցնող աշխատակիցների քանակ	Հաստիքը զբաղեցնող աշխատակիցների ընդհանուր դրույք
1	Տնօրեն	1.00	1	1
2	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	0.75	0	0
3	Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	0.75	0	0

4	Վարչատնտեսական համակարգող	1.00	1	1
Մանկավարժական հաստիքներ				
1	Զինդեկ	1.00	1	1
2	Հոգեբան	0.75	1	0.75
3	Գրադարանավար 1	1.00	1	1
4	Լաբորանտ	0.50	0	0
5	Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	0.75	1	0
6	Մեթոդ միավորման նախագահ	3.00	3	3
7	Դասղեկ	10.00	7	6.04
8	Ուսուցչի օգնական 1	0.50	1	0
Ուսումնասօժան համակազմ				
1	Գործավար	1.00	0	0
2	Հավաքարար 1	3.00	3	0
3	Այգեպան	1.00	0	0
4	Խոհարար	0.50	1	0
5	Քաղպաշտպանության շտաբի պետ	0.50	1	0.3
6	Օպերատոր 1	0.75	1	1
7	Վառարան վառող	1.00	0	0
8	Ընթացիկ վերանորոգման բանվոր 1	0.75	0	0
9	Պահակ 2	4.00	4	0

10	Գնումների գծով մասնագետ	0.30	1	0
1	Հաշվապահ	1.00	1	0

Դպրոցն ունի թվով 19 մանկավարժներ, որոնցից 18-ը՝ բարձրագույն մասնագիտական որակավորմամբ:

<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունները առողջ են և օրինակելի: ✓ Դպրոցի անձնակազմի և շահառու այլ կողմերի գործուն ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ, առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները: ✓ Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական համակազմի ազատ կամարտահայտման իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները: ✓ Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական 	<ul style="list-style-type: none"> ✓ Դասասենյակները կարիք ունեն կապիտալ վերանորոգման ✓ Նորագույն նյութատեխնիկական բազայով զինված առարկայական դասարանների, աուդիո-դասարանների բացակայություն ✓ ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության կազմակերպման մատչելի միջավայրի և խելամիտ հարմարեցումների բացակայություն, ծառայությունների տրամադրման ցածր մակար ✓ Սպորտային և գեղագիտական խմբակների բացակայություն ✓ Օլիմպիադաների, տարբեր մրցույթների նախապատրաստելու համար խմբակների բացակայություն
---	---

<p>դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիարժեք ներառումը: ✓ Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները: 	
--	--

2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ


<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի մանկավարժները պարբերաբար մասնակցում են մասնագիտական աճն ապահովող սեմինարների՝ ստանալով համապատասխան հավաստագրեր: ✓ Կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ դպրոցում, փորձի փոխանակում այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ: Մեթոդիավորումները ակտիվ աշխատում են այս ուղղությամբ՝ հանդես գալիս զեկուցումներով և խորհրդատվություններով: ✓ Ուսումնական հաստատությունը կառավարվում է կրթության գործում մանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ: ✓ Դպրոցում ապահովված են անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ 	<ul style="list-style-type: none"> ✓ Տարբեր մրցույթների, կամավոր ատեստավորման, տարակարգի բարձրացմանն ուղղված աշխատանքների պասիվություն
--	---


ենթակառուցվածքները, խթանվում են տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցությունը:

- ✓ Դպրոցի մանկավարժները մասնակցել են նոր ՀՊՁ-ի վերապատրաստումներին
- ✓ Դասապրոցեսը 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում կազմակերպվում են նոր ՀՊՁ-ին համապատասխան
- ✓ Ուսուցիչները և տնօրենությունը պարբերաբար մասնակցում են նոր ՀՊՁ-ի վերապատրաստման դասընթացների

2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը

Դպրոցն իր առաջ խնդիր է դրել բարձրացնելու սովորողների ուսման որակը (ցուցանիշները ներկայացված են ստկոսով)






- ✓ Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացը:
- ✓ Լուրջ աշխատանքներ են տարվում ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ.
- ✓ Դպրոցի զարգացման ծրագրի տեսլականից բխող ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորում:
- ✓ ՈՒԴԱ իրականացման փուլում ընթացիկ կարիքների գնահատում և գործընթացի արդյունավետության բարելավում ՀՊՁ պահանջներին համապատասխան:

- ✓ Համակողմանի և տարբեր ձևերով ՈՒԴԱ արդյունավետության գնահատման թերացումներ
- ✓ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ կապված դանդաղ առաջընթաց
- ✓ Օլիմպիադաների մասնակցության ցածր տոկոս
- ✓ Բուհերում սովորող դպրոցի շրջանավարտ -ուսանողների թիվը ցածր է:
- ✓ Հանրապետական օլիմպիադաների մասնակցության բացակայություն:


2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները

- ✓ Դպրոցի կայքում տեղակայված են դպրոցի ֆինանսական

<p>հաշվետվությունները, հայտարարություններն ու նորությունները՝ https://mikhailovka.schoolsite.am/</p> <p>✓ Պաշարների շտեմարանում պարբերաբար տեղադրվում և թարմացվում են ուսումնադաստիարակչական աշխատանքների փաստաթղթերը՝ https://lib.amedu.am/article/4418</p>	
<p>✓ Դպրոցն օգտվում է տարբեր էլեկտրոնային հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից:</p> <p>✓ Ապահովված է ինտերնետ կապով, գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան:</p> <p>✓ Աշակերտները մասնակցում են <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիայի կազմակերպած տարաբնույթ միջոցառումների:</p>	<p>✓ Ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական թերի միջավայր, ժամանակակից սարքավորումների, ՏՀՏ-ի անբավարար քանակ և վիճակ, էլեկտրոնային գրադարանի բացակայություն :</p> <p>✓ ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների, նորագույն սարքավորումների ու նյութատեխնիկական բազայի բացակայություն:</p> <p>✓ Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար հագեցված ռեսուրս-կետրոնի, խելամիտ հարմարեցումների բացակայություն:</p> <p>✓ Ինֆորմատիկայի դասասենյակի բացակայություն</p>
<p>Ուսումնական նպատակով կատարված ծախսերը</p>	
<p>Դպրոցի ֆինանսական ցուցանիշներն ըստ տարիների</p>	



Դպրոցի բյուջեի ծախսերն ըստ ոլորտների. 2022թ (տոկոսներով)



Բյուջետային հնարավորությունները

Դպրոցի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեի հատկացումներն են, որոնցից էլ ձևավորվում են դպրոցի բյուջեի ծախսերը հետևյալ հիմնական ուղղություններով.

1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2.	Եկամտահարկի վճարումներ
3.	Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4.	Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
5.	Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր
6.	Կոմունալ ծառայությունների վճարումներ
7.	Կապիտալ ծախսեր
8.	Այլ ծախսեր
✓	2022թ դպրոցում աշակերտներ և անձնակազմի թվի հարաբերակցությունը 5:1 է:
✓	Ուսուցիչների պարտադիր վերապատրաստումների ուղղությամբ 2022թ-ին ծախսվել է 96000դրամ, որը կազմում է բյուջեի 0.2%-ը:
✓	Հաշվի առնելով, որ դպրոցի բյուջեի մեծ մասն ուղղվում է աշխատավարձին ու դրան հավասարեցված վճարներին, ինչպես նաև դպրոցի պահպանման ծախսերին (էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման դիմաց վճարներ), ուստի ուսումնական նպատակով կատարված ծախսերը խիստ սահմանափակ են:

2.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները

Ոլորտ	Հիմնախնդիր
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի շենքը գտնվում է անբավարար վիճակում, դասասենյակները ունեն կապիտալ վերանորոգման կարիք ✓ Դպրոցի գրադարանի վիճակը ևս անմխիթար է. գրքերի պահպանման համար ոչ թույլատրելի խոնավ

	<p>միջավայր է</p> <ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցն ունի լաբորատոր սարքավորումներ, որոնք սակայն հին են, ✓ Նյութատեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, լաբորատոր գույքի և նյութի ոչ բավարար հագեցվածություն ✓ Սպորտդահլիճը կարիք ունի կապտավերանորոգման
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	<ul style="list-style-type: none"> ✓ Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության թերացում, իրենց գործառույթների և լիազորությունների մասին իրազեկվածության ցածր մակար :
Մանկավարժական համակազմ	<ul style="list-style-type: none"> ✓ Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի համար դիմողների ցածր տոկոս, մրցույթների, նախագծերի ցածր տոկոս
Աշակերտական համակազմ	<ul style="list-style-type: none"> ✓ Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակաս, ուսման որակի ցածր տոկոս:
Ծնողական համակազմ	<ul style="list-style-type: none"> ✓ Պասիվ են տարբեր նախաձեռնություններում, արտադպրոցական ու արտադասարանային աշխատանքներում:
Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	<ul style="list-style-type: none"> ✓ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների պակաս, շարունակ հայտարարվող մրցույթների , դրամաշնորհների մասնակցության բացակայություն;
Ուսումնական միջավայր	<ul style="list-style-type: none"> ✓ Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությանը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի անլիարժեքություն:

Հաստատության տրամադրած կրթության որակը	✓ Օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում, մասնակցության պակասի , չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող սաների առկայություն, ԿԱՊԿՈՒ սովորողների շոշափելի առաջընթացի դանդաղ տեմպ , ուսման՝ միջինից ցածր որակ:
Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	✓ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման ցածր տոկոս:

3. Նպատակների և խնդիրների սահմանումը:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը, արդյունքների գնահատման չափանիշները, պատասխանատուները, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը:

1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Նպատակը՝

- ✓ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում

Խնդիրներ՝

- ✓ Կատարել կապիտալ վերանորոգում
- ✓ Հարստացնել հաստատության նյութատեխնիկական բազան

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատուներ	Ժամանակացույց	Միջոցները և պարագաները	Ակնկալվող արդյունք
Դպրոցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, աշակերտների համար	Հիմնադիր լիազոր մարմին վարչատնտեսական համակարգող,	2026-2028թ	Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր	Դպրոցը բարեկարգ է, ունի գեղեցիկ տեսք, խելացի հարմարեցումներ և

հարմար, ուսումնական պրոցեսին նպաստող միջավայրի ապահովում	տնօրեն			նպաստում է աշակերտների ուսման պրոցեսին:
ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների ստեղծում և վերագինում ժամանակակից սարքավորումներով	Հիմնադիր լիազոր մարմին վարչատնտեսական համակարգող, տնօրեն	2024-2026թ	Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր արտաբյուջետային միջոցներ	ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով
Ստեղծել համակարգչային դասասենյակ՝ ապահովված ժամանակակից սարքավորումներով և ծրագրային ապահովմամբ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, լիազոր մարմին	2024-2028	Պետբյուջե, դրամաշնորհային ծրագրեր, արտաբյուջետային միջոցներ	Համակարգչային դասասենյակ՝ ապահովված ժամանակակից ցարքավորումներով և ծրագրերով
Վերանորոգել և կահավորել ժամանակակից գրադարան՝ հարուստ ֆոնդով	տնօրեն Վարչատնտեսական համակարգող խորհրդակցական մարմիններ	2024-2029	Պետբյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բարեկարգ, հարուստ ֆոնդով ժամանակակից գրադարան. ավելացված ծրագրային գեղարվեստական գրականություն
Սպորտհրապարակի բարեկարգում, ժամանակակից մարզագույքի ձեռքբերում	Լիազոր մարմին Վարչատնտեսական համակարգող տնօրեն	2025-2028	Դպրոցի բյուջե Արտաբյուջետային միջոցներ	Բարեկարգ սպորտհրապարակ , անհրաժեշտ պարագաներ
Ստեղծել և կահավորել ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված դասասենյակ՝ համապատասխան գույքով և հարմարեցումներով	Լիազոր մարմին Վարչատնտեսական համակարգող տնօրեն	2024-2027	Դպրոցի բյուջե Արտաբյուջետային միջոցներ	Գեղեցիկ, հարմարեցումներով ապահովված ԿԱՊԿՈՒ դասասենյակ

Ակնկալվող արդյունքը.

Դպրոցը բարեկարգ է, դասասենյակները վերանորոգված են, դպրոցում ժամանակակից կրթական կարիքները բավարարող ուսումնական միջավայրի (լաբորատորիաներ, մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակ, հարուստ ֆոնդով գրադարան), նյութատեխնիկական բազայի, ժամանակակից

սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, լաբորատոր գույքի և նյութի հագեցվածություն:

Գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողություն	Արդյունավետ	Բավարար	Ոչ արդյունավետ
Դպրոցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, աշակերտների համար հարմար, ուսումնական պրոցեսին նպաստող միջավայրի ապահովում	Դպրոցի կապիտալ վերանորոգման աշխատանքները կատարվում են ըստ պլանավորման,	Դպրոցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ շեղվում են պլանավորվածից	Դպրոցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ չեն կատարվում
ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների ստեղծում և վերազինում ժամանակակից սարքավորումներով	Առկա են ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներ վ և անհրաժեշտ նյութերով	Առկա են ԲՏՃՄ որոշ առարկաների լաբորատորիաներ, կա ժամանակակից սարքավորումների և անհրաժեշտ նյութերի պակաս	Չկան ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով
Վերանորոգել և կահավորել ժամանակակից գրադարան՝ հարուստ ֆոնդով	Առկա է ժամանակակից գրադարան՝ հարուստ ֆոնդով	Առկա է ժամանակակից գրադարան՝ բավարար ֆոնդով	Բացակայում է կահավորված ժամանակակից գրադարան :
Սպորտհրապարակի բարեկարգում, ժամանակակից մարզագույքի ձեռքբերում	Առկա է բարեկարգ սպորտհրապարակ ժամանակակից մարզագույքով	Առկա է բարեկարգ սպորտհրապարակ, ժամանակակից մարզագույքի պակաս	Սպորտհրապարակը բարեկարգ չէ:
Համակարգչային դասասենյակի ստեղծում և կահավորում	Առկա է ժամանակակից սարքավորումներով և ծրագրերով ապահովված համակարգչային դասասենյակ	Առկա է համակարգչային դասասենյակ, որոշ սարքավորումների պակաս կա	Դասասենյակը թերի է, սարքավորումների կարիք կա
ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված դասասենյակի ստեղծում և կահավորում	Ստեղծվել է խելացի հարմարեցումներով ԿԱՊԿՈՒ դասասենյակ	Ստեղծվել է ԿԱՊԿՈՒ դասասենյակ, սակայն հարմարեցումների և սարքավորումների կարիք կա	ԿԱՊԿՈՒ երեխաների դասասենյակը թերի վիճակում է

Ռիսկերը

Արտաբյուջետային միջոցների բացակայություն
 Օրենքով չարգելված այլ աղբյուրների բացակայություն

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

Հետևողական աշխատանք տանել դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման ուղղությամբ:

2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Նպատակը՝

- ✓ Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի արժևորում, տեղեկացվածության ապահովում, նրանց միջև կապի ամրապնդում:

Խնդիրներ՝

- ✓ Իրազեկել յուրաքանչյուր մարմնի գործառույթների մասին, զարգացնել մարմինների միջև կապը

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Պատասխանատուներ	Ժամանակացույց	Միջոցներ և պարագաներ	Ակնկալվող արդյունք
Իրականացնել սերտ համագործակցություն այդ մարմինների միջև, ապահովել դրանց փոխհամագործակցությունը, իրենց գործառույթների իմացությունը՝ սեմինարների, հանդիպումների և այլնի միջոցով:	Տնօրեն դասուղեկներ	2024-2029	ՏՀՏ գործիքներ Տնօրեն Խորհրդակցական մարմինների անդամներ	Իրազեկ, իրենց գործառույթների տեղյակ, համագործակցող խորհրդակցական մարմիններ
Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը	Տնօրեն դասուղեկներ	2024-2029	ՏՀՏ գործիքներ Տնօրեն խորհրդակցական մարմինների	

			անդամներ	
